

ԱՄՍԵԱՄԻՒ

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՈՒ-
ԹԻՒՆՆԵԼ իր ամսական նիստը գումարեց
ապրիլ 20-ին 22 անդամներու ներկա-
յութեան։ Կային նաև Հիւքեր՝ Տօքթ.
Թագուբեան (Սոֆիայէն) Տօքթ. Ամսա-
րեան (Գրայլայէն) և Տօքթ. Մանուկ-
յան (Գուշէն), որոնք անցողակի
Փարիզ կը գտնուին գիտական ուսում-
նասիրութեան համար։

Նախագահը՝ Տօքթ. Քոլոյեան, ներ-
կայացուց Գ. Կ. Յ. Բագմաջեանի
ըստքերով հրատարակուած Ամերաով-
լաբի Անձիքաց Անպէտը (առ զբա-
խասկան) և Բժշկ. Միութեան կողմէ
լիրմօրէն շնորհաւորեց զայն իր այս
թանկապին աշխատութեան համար։

Տօքթ. Հ. Սագմանեանը որ նոր
վկայուեցաւ Փարիզի Բժշկ. Համալսա-
րանէն, ամփոփ կերպով ներկայացուց
իր աօքթօրչէի թէշը՝ ԱՄանուկներու
փախուստներուու ժամին (Fugues infantiles).

Տօքթ. Ետզուպեան հազորդադրու-
թին մը կարդաց փորի ուռերու հա-
դուգէպ պարագայի մը ժամին։

Տօքթ. Քոլոյեան հազորդադրութիւն
մը ըրաւ լզային ժամանաւոր հիւանդա-
թեան մը (Mal. de Parkinson) երկու
պարագաներու ժամին։

ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՅՔԱՄ. — Երեանի
թժկական համագումարին մէջ առումն
որոշումներու համաձայն, անհրաժեշտ
նկառուած է իիստ պայքար մը բանալ
ընկերային հիւանդաւութիւններու ծառաւ-
ժան գէմ։ Այսպէս, պիտի հիմնուին
երեանի մէջ բուժարան մը թոքախտա-

ւորներու յատուկ, նոյնպէս բուժարան
մը ալ Ալքամանդրապովի մէջ՝ վեներա-
կան ախտներու յատուկ։ Մրազքուած է
Հիմնել նաև Փասթէօրեան հաստատու-
թիւն մը (հաստազարւմարան), յամա-
պայքար մը թրախօմայի և թանչքի
(արզանթէրի) գէմ։ Պիտի աշխատուի
նաև Հիմնել առողջապահութեր և ապագի-
նարաններ, հոգեբուժական հիւանդանոց
մը։ Պիտի բացուի հիւանդապահութէր-
ներու դասընթացք մը։

Թէհրանի ՀԱՅ ԲԺՇԿ. ՄԻՈՒԹԻՒ-
ՆԵԼ, որ վեց ամիսէ ի վեր գոյութիւն
ունի, բժշկական՝ առողջապահական
նիութերու շուրջ կազմակերպած է հրա-
պարակային դասախոսութիւններ օրոնք
ձրի են և տեղի կ'ունենան 15 օրը
անզամ մը։ Դասախոսութիւններ եղած
են արդէն Ատամեներու հիւանդաւութեանց,
Մալարիայի, Վիժեցումի վատանդներու
ժամին։ Հետզհետէ պիտի խօսուին երե-
խաներու, Կանանց և տարափոխիկ
հիւանդաւութիւններու, նաև թոքախտի,
սիֆիլիսի ժամին ևայլն։

Բժշկական Միութիւնը մտադիր է
ձրի բժշկական խնամք ապահովել
զպրցականներուն, ինչպէս նաև բանալ
րութարան մը՝ բժշկական խորհուրդնե-
րով օգնելու համար հայ և պարսիկ
ազգան հիւանդներուն։

Ե՞րբ կը կազմուէին կամ կը վերա-
կազմուէին Ցունատանի, Եգիպտոսի,
Առուրիոյ և Ամերիկայի Բժշկական Միու-
թիւնները։

ՖԻԼԱՏԷԼՖԻՈԾ մէջ ևս ձեռնար-
կուած է Հայ Բժիշկներու Միութեան
մը կազմութեան։